



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 30 » 05 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N^o 063 - 24

Նախաձեռնող՝

Յու. Աֆրիկյան

ք. Երևան Մ.- Մելիքյան 52. 24բն.,

Գործունեությունը՝

**Ա. Քոչինյան փողոց հ.15 հասցեում նախատեսվող
բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության
շինության կառուցում**

Նոր Նորք վարչական շրջան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 063 - 24

«30» Մայիս 2024թ.

Ա. Քոչինյան փողոց հ.15 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝ Բաղաքացի Յու. Աֆրիկյան
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Նոր Նորք վարչական շրջանում կառուցել բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության կառույց:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (<Օ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության կառույցի նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից տրամադրված նախագծային առաջադրանքը, Երևանի քաղաքապետարանի կողմից 2023թ. մայիսի 8-ին տրված N 01/18-07/1-Դ-34719-250 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացությունը, կադաստրի հողահատկացման վկայականը:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գործունեության տարածքը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի Ա. Քոչինյան հ.15 հողամաս հասցեում: Նախատեսվող շինության հարևանությամբ գտնվում են հասարակական կառույցներ՝ 15-44 մետր հեռավորությունների վրա: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով շինություն:



Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Ջրվեժ-Նորք հրաբխային սարավանդի սահմաններում: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1263.0-1273.0 մետրի սահմաններում: Ստորգետնյա ջրերը գտնվում են 40.0 մետրից խորը:

Համաձայն հայտում ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Դիտարկվող և նրա հարակից տարածքներում առկա է մարդկային գործոնը, կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Հողամասն ազատ է կառուցապատումից, ինչպես նաև շինարարության ընթացքում հատման ենթակա ծառաթփային բուսականությունից: Հողամասում բուսահողի հզորությունը կազմում է 0.2-0.3 մ, ծավալը՝ 1200 մ³:

Համալիրը կազմված կլինի մեկ ստորգետնյա և երեք վերգետնյա հարկերից, նախատեսվում է նաև վերգետնյա ավտոկայանատեղի: Նկուղային հարկում նախատեսված է ավտոկայանատեղի՝ 40-44 ավտոմեքենա կայանելու համար, պահեստային տարածքներ, առաջին և երկրորդ հարկերում նախատեսված է առևտրի կենտրոն, իսկ երրորդ հարկում՝ 20 հյուրանոցային համարներ: Նախատեսվում է նաև կառուցել պարիսպ՝ հողատարածքի արևմտյան հատվածում:

Համաձայն «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ հասարակական կառույցի ջրամատակարարումն իրականացվելու է Քոչինյան փողոց հ.15 հողամասից մոտ 70մ հեռավորության վրա գոյություն ունեցող ջրատարից: Ամբողջ շինությունը հագեցված կլինի ջրային հրդեհամարման ավտոմատ համակարգով:

Օդափոխության համար նախատեսված է խառը տեսակի՝ փչող-քաշող օդափոխման համակարգ (արտահոսքը մեխանիկական ճանապարհով՝ վերևի և ներքևի զոնաներից, ներհոսքը բնական ճանապարհով՝ մեքենաների մուտքի բացվածքներից):

Վաճառարահների, գրասենյակային տարածքների համար նախատեսված են ջեռուցման և հովացման երկխողովակային համակարգեր, փչող-քաշող սարքավորումներ:

Բնակելի տարածքների համար նախատեսված է ջրային ջեռուցում (ռադիատորներ և կոնվեկտորներ)՝ կոլեկտորային տեսակի, ջերմամատակարարման աղբյուրը կիրականացվի տանիքի վրա գտնվող կաթսայատնից: Նախատեսված են օդի անհատական սառեցում/օդորակում:

Հրդեհի ժամանակ անվտանգ էվակուացիայի համար նախատեսված է հակաձխային օդափոխություն ամեն հարկում, շենքում՝ չճխացող աստիճանավանդակներ՝ օդի ճնշումային ներհոսքով:

Հասարակական կառույցի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների և գործող պայմանագրի:

Հասարակական կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- շինության ընդհանուր մակերես՝ 12027.6 քմ,
- հողատարածքի մակերեսը՝ 6048.4 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 3031 քմ /50.115%/,
- կանաչապատման մակերեսը՝ 335 քմ /5.539%/,
- նկուղային հարկի մակերեսը՝ 2983.6 քմ,



միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 1190 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինին:

2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները:

ԵՃՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ


Քաղաքացի Յու. Աֆրիկյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք Ա. Քոչինյան հ.15 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական շինության կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան